ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳՆԴԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ
ՀՈՒԼԻՍԻ 18, 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳՆԴԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ
ՀՈՒԼԻՍԻ 18, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.ՆԱԽԱԲԱՆ……3

II.ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ……3

III. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱԳՐԵՍԻԱՆ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ……6

Ա) Կյանքի և անվտանգության, հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի խախտումները……7

Բ) Կրթության իրավունքի անխոչընդոտ իրացման հետ կապված խնդիրները ……9

IV. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ ԳՆԴԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ……12

V. ՕԲՅԵԿՏԻՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ/ ……17

VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ……29

I. ՆԱԽԱԲԱՆ

1. Սույն արտահերթ զեկույցում ներկայացվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Արարատի մարզի Արարատ համայնքի Երասխ բնակավայրում իրականացրած փաստահավաք աշխատանքների արդյունքներով արձանագրված մարդու հիմնարար իրավունքների խախտումները:
2. Երասխ բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում՝ Արարատի մարզում՝ մայրաքաղաք Երևանից 66 կմ հեռավորությամբ:
3. Երասխ բնակավայրի բոլոր քաղաքացիական ենթակառուցվածքները, դպրոցը, մանկապարտեզը, ինչպես նաև «ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» ՍՊԸ կողմից օտարերկրյա ներդրումներով կառուցվող մետալուրգիական գործարանը (այսուհետ՝ Գործարան), գտնվում են անմիջապես ադրբեջանական մարտական դիրքերի ուղիղ նշանառության տակ:
4. Ըստ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված տեղեկատվության՝ 2023 թվականի հունիսի 13-ին և 14-ին ադրբեջանական մարտական դիրքերից կրակահերթեր են արձակվել Երասխի ուղղությամբ, հատկապես ինտենսիվ ու թիրախային գնդակոծության է ենթարկվել Երասխում կառուցվող Գործարանը:
5. Ադրբեջանական զինված ուժերի գործողությունների արդյունքում խախտվել են խաղաղ բնակչության կյանքի, հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության, սեփականության, կրթության, աշխատանքի, ձեռնարկատիրությամբ զբաղվելու և մի շարք այլ հիմնարար իրավունքները:

II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

6. Զեկույցի նպատակն է հավաքագրել, վերլուծել և ներկայացնել 2023 թվականի հունիսին ՀՀ ինքնիշխան տարածքում գտնվող Երասխ բնակավայրի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի կրակոցների հետևանքով մարդու իրավունքների խախտումները և ներկայացնել առաջարկություններ մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի խնդիրները լուծելու համար:

7. 2023 թվականի հունիսի 15-ին Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած փաստահավաք խումբն այցելել է Երասխ բնակավայր:

8. Այցի նպատակն էր ադրբեջանական զինված ուժերի զինծառայողների կողմից ս.թ. հունիսի 13-14-ին Երասխի ուղղությամբ ինտենսիվ կրակոցների հետևանքով մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստահավաք աշխատանքներ իրականացնելը, խախտումները հաստատող փաստեր և ապացույցներ հավաքագրելը, քաղաքացիական բնակչությանը, Գործարանի տնօրինությանն ու աշխատակիցներին մտահոգող խնդիրների վերհանումը, ինչպես նաև կրակոցների հետևանքով վիրավորում ստացած և բժշկական կենտրոն տեղափոխված գործարանի երկու օտարերկրյա քաղաքացիների առողջական վիճակին ու բուժման ընթացքին ծանոթանալը:

9. Մարդու իրավունքների պաշտպանը տեղում իրավիճակը քննարկել է Արարատի մարզպետարանի, Արարատ համայնքի ղեկավար կազմի և Երասխ բնակավայրի վարչական ղեկավարի հետ: Առանձին հանդիպումներ են իրականացվել բնակիչների, ինչպես նաև Երասխի միջնակարգ դպրոցի տնօրենի հետ:

10. Հանդիպումներ և առանձնազրույցներ են եղել Երասխում կառուցվող Գործարանի տնօրինության ու աշխատողների հետ:

11. Մարդու իրավունքների պաշտպանն այցելել է Արարատի բժշկական կենտրոնում ստացիոնար բուժում ստացող Հնդկաստանի երկու քաղաքացիներին, ովքեր վիրավորում են ստացել ադրբեջանական կրակոցների հետևանքով: Նրանց առողջական վիճակի հետ կապված հարցերը Պաշտպանը քննարկել է Բժշկական կենտրոնի տնօրենի ու բուժող բժշկի հետ:

12. Սույն զեկույցի կազմման աշխատանքների շրջանակում ՄԻՊ աշխատակազմն իրականացրել է մեդիա հարթակներում հրապարակումների, տեսանյութերի, լուսանկարների ուսումնասիրություններ, վերլուծվել են ՄԻՊ աշխատակազմին, այդ թվում՝ 24/7 ռեժիմով գործող թեժ գծին ստացված ահազանգերը:

13. Համանման տեղեկություններ են տարածել զանգվածային լրատվության միջոցները[1], հասարակական կազմակերպությունները և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ համագործակցող դերակատարները:

14. Զեկույցը կառուցվածքային առումով բովանդակում է հետևյալ բաժինները՝ Երասխ բնակավայրում կատարված փաստահավաք աշխատանքների արդյունքում ստացված տեղեկությունների ներկայացում, կյանքի և անվտանգության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, կրթության, տնտեսական գործունեությամբ զբաղվելու, աշխատանքային իրավունքների խախտումների արձանագրում, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունների ներկայացումը արձանագրված խնդիրների առնչությամբ:

[1] https://www.azatutyun.am/a/32460636.html
https://www.youtube.com/watch?v=E88iBgbKf8E&t=19s
https://www.youtube.com/watch?v=zI2US0x6UzQ

III. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱԳՐԵՍԻԱՆ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

15. 2023 թվականի հունիսի 13-ին և 14-ին ադրբեջանական զինված ուժերն ինտենսիվ կրակ են բացել Երասխ բնակավայրի ուղղությամբ՝ կիրառելով տարբեր տրամաչափի զենքեր, ինչպես նաև դիպուկահար հրացաններ:

16. Թիրախային գնդակոծության է ենթարկվել Գործարանը, ինչի հետևանքով վիրավորում են ստացել Գործարանի շինարարական աշխատանքներում ներգրավված Հնդկաստանի 2 քաղաքացի: Գործարանի շինաշխատանքները դադարեցվել են:

17. Կրակոցների պատճառով դադարեցվել է Երասխի դպրոցում ընթացող քննությունը, աշակերտներն ու ուսուցիչները դպրոցից տարհանվել են:

18. Մարդու իրավունքների պաշտպանության վիճակին տեղում ծանոթանալու նպատակով Պաշտպան Անահիտ Մանասյանի գլխավորած աշխատանքային խումբը հունիսի 15-ին այցելել է Երասխ բնակավայր[2]:

19. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված շուրջօրյա ուսումնասիրությունների ու փաստահավաք աշխատանքների արդյունքում արձանագրվել է, որ ադրբեջանական զինծառայողների գործողությունների պատճառով խախտվել են Երասխի բնակիչների կյանքի և անվտանգության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, կրթության, աշխատանքային, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և այլ հիմնական իրավունքները[3]:

[2] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2582
[3] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2580

Ա) Կյանքի և անվտանգության, հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի խախտումները

20. Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք խումբը Երասխ բնակավայր այցի ընթացքում արձանագրել է, որ բնակիչների տներն ադրբեջանական մարտական դիրքերից գտնվում են մի քանի հարյուր մետր հեռավորությամբ, իսկ ամենամոտ տունը, ադրբեջանական դիրքից հեռու է ընդամենը 100 մետր: Քաղաքացիական ենթակառուցվածքները, այդ թվում՝ մարդկանց տները, դպրոցը, մանկապարտեզը, գտնվում են ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության և թիրախավորման ներքո:

21. Բնակիչները մտահոգություն են հայտնել անվտանգային հարցերի վերաբերյալ և նշել, որ ադրբեջանական զինված ուժերի կրակոցների պատճառով խաթարվել է իրենց խաղաղ և բնականոն կյանքը, իրական վտանգ է ստեղծվել կյանքի և անվտանգության, հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության համար:

22. Մասնավորապես, փաստահավաք խմբին բնակիչները տեղեկացրել են, որ ադրբեջանական զինված ուժերը 2023 թվականի հունիսի 13-ի երեկոյան մեկուկես ժամից ավելի ինտենսիվ կրակ են բացել բնակավայրի ուղղությամբ՝ հատկապես թիրախավորելով նոր կառուցվող Գործարանի տարածքը:

23. Բնակիչների տեղեկացմամբ՝ այդ կրակոցները նոր ինտենսիվությամբ շարունակվել են նաև հունիսի 14-ին՝ առավոտյան ժամը 11:00-ի սահմաններում:

24. Ադրբեջանական զինված ուժերը, ի թիվս այլնի, կրակոցներ են արձակել նաև բնակավայրով անցնող միջպետական Մ2 ավտոմոբիլային ճանապարհի ուղղությամբ և թիրախավորել ճանապարհին տեղադրված Հայաստանի Հանրապետության դրոշը՝ վնասելով այն: Երասխ բնակավայրի վարչական ղեկավարը նշել է, որ դրոշը փոխարինվել է նորով:

25. Կրակոցներն աննախադեպ ինտենսիվ են եղել, դրանց բարձր ձայնը պարզ լսելի է եղել ամբողջ բնակավայրում: Ըստ բնակիչների՝ կրակոցների այդպիսի բարձր ձայնը թույլ է տալիս պնդել, որ դրանք արձակվել են նաև խոշոր տրամաչափի զենքերից:

Ստեղծված իրավիճակը բնակիչների՝ հատկապես ծերերի և երեխաների շրջանում լարվածություն է առաջացրել, մարդիկ հայտնվել են անորոշության մեջ:

26. Պաշտպանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ ադրբեջանական զինված ուժերը խաղաղ բնակչությանը շարունակաբար ահաբեկելու և նրանց շրջանում տագնապ առաջացնելու նպատակ են հետապնդում:

27. Այս առումով անհրաժեշտ է վկայակոչել անվտանգային խնդիրներին վերաբերող հարցերը կարգավորող իրավական ակտերը և խնդիրները դիտարկել դրանց լույսի ներքո:

28. ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը, թիվ 4 ընդհանուր մեկնաբանությունների շրջանակներում անդրադառնալով բավարար կենսամակարդակի բաղադրատարր հանդիսացող բնակարանի իրավունքին, արձանագրել է. «*Բնակարան ունենալու իրավունքը (...) պետք է դիտվի որպես ինչ-որ տեղ* **ապահով, խաղաղ և արժանապատիվ ապրելու իրավունք**[4]»:

29. Ադրբեջանական զինծառայողների գործողությունների և նրանց ագրեսիվ վարքագծի պատճառով հնարավոր չի լինում ապահովել անձի՝ բնակարան ունենալու իրավունքի կարևոր բաղադրատարր հանդիսացող ապահով և **խաղաղ ապրելու իրավունքը**:

30. Բացի այդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորվում է յուրաքանչյուր անձի՝ անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ներառում է նաև անձի **ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը**[5]:

---

[4] Տե՛ս, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի թիվ 4 ընդհանուր մեկնաբանություններ, պար. 7:

[5] Տե՛ս, օրինակ՝ Բուտուրգան ընդդեմ Ռումինիայի գործով (Buturugă V. Romania) 2020 թվականի փետրվարի 11-ի վճիռը, դիմում թիվ 56867/15, Վավրիցկան և այլոք ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով (Vavřička and Others v. The Czech Republic) 2021 ապրիլի 8-ի վճիռը, դիմում թիվ 47621/13:

31. Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ **պետությունները կրում են նեգատիվ պարտականություն՝ չձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք ապօրինի կերպով կմիջամտեն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրացմանը**:

32. **Ակնհայտ է, որ ադրբեջանական զինծառայողների դրսևորած վարքագիծը հակասում է նաև ՄԱԿ կանոնադրությամբ սահմանված սկզբունքներին և նպատակներին, հանդիսանում է խաղաղության սպառնալիք և ագրեսիայի դրսևորում:**

33. Վերոնշյալի կապակցությամբ Պաշտպանն ընդգծում է, որ ՀՀ ինքնիշխան տարածքի՝ Երասխի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի իրականացրած գործողությունները, որոնք նպատակ են հետապնդում ահաբեկել, վախեցնել քաղաքացիական բնակչությանը, խոչընդոտել նրանց իրավունքների պատշաճ իրացմանը, ակնհայտ անօրինական են և հակասում են միջազգային իրավունքին:

Բ) Կրթության իրավունքի անխոչընդոտ իրացման հետ կապված խնդիրները

34. Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած փաստահավաք խումբը 2023 թվականի հունիսի 15-ին այցելել է Երասխի միջնակարգ դպրոց:

35. Արձանագրվել է, որ բնակավայրի դպրոցն ու դպրոցին կից մանկապարտեզը գտնվում են ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության ներքո՝ անմիջապես մարտական դիրքերի հարևանությամբ: Դպրոցը, որտեղ սովորում է 129 աշակերտ, ադրբեջանական մարտական դիրքից հեռու է մոտ 300-400 մետր:

36. Դպրոցի տնօրենը տեղեկացրել է, որ հունիսի 14-ին տեղի էր ունենում 12-րդ դասարանի պետական ավարտական քննություն՝ Հայոց պատմություն առարկայից: Նույն օրն առավոտյան ժամը 11:30-ի սահմաններում՝ աշակերտների քննություն հանձնելու ժամանակ, սկսվել են կրակոցները: Ընդ որում, կրակոցներն արձակվել են անմիջապես դպրոցի դիմացի բլրին տեղակայված ադրբեջանական դիրքերից:

37. Աշակերտները շուրջ 15 րոպե կրակահերթերի ձայների ներքո շարունակել են կատարել քննական աշխատանքը, սակայն կրակոցների աննախադեպ ինտենսիվության

և դրանց բարձր ձայնի պատճառով երեխաների և ուսուցիչների անհանգստությունը հաշվի առնելով՝ ստիպված են եղել քննությունը 20 րոպե շուտ ավարտել: Տնօրենը նշել է, որ քննությունը նախատեսվածից շուտ ավարտելու մասին կազմվել է հատուկ արձանագրություն, որը ներկայացվել է նաև Պաշտպանին (արձանագրության լուսանկարը ներկայացված է սույն զեկույցի V գլխում):

38.Դպրոցի տնօրենը հայտնել է նաև, որ անվտանգության նկատառումներից ելնելով՝ ստիպված են եղել երեխաներին ու ուսուցիչներին խումբ-խումբ տարհանել դպրոցից:

39.Ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակը իրական անվտանգային խնդիր է առաջացրել երեխաների համար և խոչընդոտել է նրանց կրթության իրավունքի իրացմանը:

40.Սույն խնդրի համատեքստում պետք է նշել, որ **կրթության իրավունքն անձի հիմնական իրավունքներից է, որի ապահովումն ունի կարևոր նշանակություն նաև անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացման համար**:

41. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածով ևս երաշխավորվում է երեխայի՝ կրթություն ստանալու իրավունքը:

42. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, Գլխավոր ասամբլեայի, Երեխաների իրավունքների կոմիտեի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված փաստաթղթերով կարևորվել է ոչ միայն ռազմական գործողությունների ընթացքում երեխաների իրավունքների խախտման անթույլատրելի լինելը, այլ նաև հետևանքների կանխարգելման այն հրամայականը, որն անհրաժեշտ է երեխաների առօրյա կյանքի, նրանց մտավոր և ֆիզիկական զարգացման երաշխավորման համար: Այս կառույցների կողմից բազմիցս դատապարտվել է նաև ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վրա հարձակումն ու նրանց թիրախավորումը:

43. **Պաշտպանն արձանագրում է, որ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերի կողմից շարունակվող ագրեսիվ վարքագիծը կոպտորեն խախտում է միջազգային իրավունքով երաշխավորված հիմնարար իրավունքները՝ ուղղակիորեն ազդելով երեխաների բնականոն կյանքի, կրթության իրավունքի պատշաճ իրացման վրա**:

IV. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ ԳՆԴԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՐԱՍԽՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

44. Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած փաստահավաք խումբն այցելել է նաև Երասխում նոր կառուցվող մետալուրգիական գործարանի (Գործարան) տարածք, որտեղ Պաշտպանը հանդիպել ու առանձնազրույց է ունեցել Գործարանի տնօրինության ու շինարարական աշխատանքներում ներգրավված Հայաստանի և Հնդկաստանի քաղաքացիների հետ: Գործարանում աշխատում են ազգությամբ շուրջ 130 հայ և 70 հնդիկ:

45. Գործարանի տնօրինությունը և աշխատակիցները Պաշտպանին մանրամասն տեղեկություններ են հայտնել այն մասին, թե ինչպես են ադրբեջանական զինծառայողները 2023 թվականի հունիսի 13-ի երեկոյան մեկուկես ժամից ավելի տևողությամբ ինտենսիվ կրակ բացել Գործարանի վրա:

46. Այդ ժամանակ Գործարանի տարածքում ակտիվ շինարարական աշխատանքներ են ընթացել, սակայն կրակոցների պատճառով աշխատանքները հարկադրված դադարեցվել են:

47. Թիրախավորված կրակոցները եղել են Գործարանի այն ուղղությամբ, որտեղ այդ պահի դրությամբ աշխատելիս են եղել 25 աշխատակից: Ըստ աշխատակիցների՝ կրակոցները նպատակ են ունեցել խաթարելու Գործարանի տարածքում իրականացվող շինարարական աշխատանքները:

48. Նրանք նաև պատմել են, որ կրակոցները հատկապես ինտենսիվ են դարձել այն ժամանակ, երբ աշխատանքներում ներգրավված են եղել մեծ թվով աշխատակիցներ և շինարարական տեխնիկա: Իսկ այն ժամանակ, երբ շինարարական աշխատանքները դադարեցվել են, կրակոցներ չեն եղել:

49.Ս. թ. հունիսի 13-ին ադրբեջանական կրակոցների հետևանքով վնասվել են Գործարանի նոր կառուցված սյուները, պատերը, պարիսպը, վարչական շենքը, ինչպես նաև շինարարական աշխատանքներին ներգրավված տեխնիկաները:

50.Աշխատողները նաև հայտնել են, որ այդ օրը կրակոցներն արձակվել են տարբեր տրամաչափի զենքերից և կրակահերթերը եղել են նպատակային և թիրախավորված:

51. 2023 թվականի հունիսի 14-ին Գործարանի ակտիվ շինարարական աշխատանքները վերսկսվել են: Մինչդեռ, ժամը 11:00-ի սահմաններում ադրբեջանական զինված ուժերը կրկին կրակոցներ են արձակել աշխատողների ու շինարարական տեխնիկայի վրա: Օրինակ, ուղիղ թիրախավորվել է շինարարական աշխատանքներին ներգրավված կռունկը, տրակտորը:

52. Մարդիկ նշել են, որ կարծում են՝ կրակոցներն արձակվել են ադրբեջանական արտադրության կոնկրետ տեսակի դիպուկահար հրացաններից (Istiglal)[6], քանի որ դրանք առավել թիրախավորված ու վնասաբեր են եղել: Որպես հիմնավորում՝ ներկայացրել են այդ զենքից արձակված կրակոցների թողած հետքերը Գործարանի տարբեր հատվածներում, ինչպես նաև կրակված փամփուշտներից մնացած բեկորները:

53.Հենց այդ կրակոցների հետևանքով բեկորային վիրավորում են ստացել Գործարանի շինարարությամբ զբաղվող Հնդկաստանի երկու քաղաքացի: Աշխատողները նշել են, որ հազիվ են կարողացել վիրավորներին դուրս բերել տարածքից, քանի որ ադրբեջանական զինծառայողները կրակոցներ են արձակել ինչպես վիրավորներին տեղափոխող, այնպես էլ կրակոցներից թաքնվող մյուս աշխատողների ուղղությամբ:

54.Ըստ Գործարանի տնօրինության՝ վիրավորում ստացած 2 աշխատակից թիրախավորվել են նաև այն պատճառով, քանի որ աշխատելիս են եղել թթվածնի սարքերով (բալոններով), և ադրբեջանական զինվորները դիտավորությամբ թիրախավորել են հենց այդ սարքերը, որպեսզի տարածքում մեծ պայթյուն առաջանա:

[6] https://shorturl.at/kpyKP

55.Աշխատողներն ու Գործարանի տնօրինությունը Պաշտպանի հատուկ ուշադրությունն են հրավիրել այն հանգամանքի վրա, որ Գործարանի տարածքում զինծառայողներ և զինտեխնիկա երբևէ չեն եղել:

56.Փաստահավաք խումբը շրջայց է կատարել Գործարանի տարածքում և արձանագրել ադրբեջանական կրակոցների հետևանքները: Մասնավորապես, արձանագրվել է, որ վնասվել են գործարանի նոր կառուցված բետոնե սյուները, պատերը, պարիսպը, գործարանի վարչական շենքը, շենքի դիմաց կայանած քաղաքացիական ավտոմեքենան, ինչպես նաև շինարարական աշխատանքներին ներգրավված տեխնիկան:

57.Գործարանի տնօրինությունը նշել է, որ դեռևս կրած վնասների ամբողջական հաշվարկ չի կատարվել, սակայն եթե իրավիճակը շարունակական լինի, վնասը շատ ավելի մեծ կլինի՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ավարտման ժամկետի ձգձգմամբ:

58.**Ադրբեջանական զինված ուժերի գործողությունների պատճառով խախտվել են գործարարությամբ զբաղվող անձանց միջազգայնորեն երաշխավորված, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Լրջորեն վտանգվել են հարյուրավոր քաղաքացիների աշխատանքային իրավունքները**:

59.Ադրբեջանական կրակոցները և թիրախավորումը Երասխ բնակավայրի և հատկապես Գործարանի ուղղությամբ շարունակվել են նաև հաջորդող օրերին (օրինակ, հունիսի 16-ին, 19-ին, 24-ին, հուլիսի 10-ին[7] և այլն)[8]: Խաթարվել են Գործարանի շինարարական աշխատանքները: Գործարանի տնօրինությունը

[7] https://www.aysor.am/am/news/2023/07/10/%D5%A5%D6%80%D5%A1%D5%BD%D5%AD/2117476
[8] https://www.pastinfo.am/hy/news/2023/06/16/5scacoi6m/1595196
https://oragir.news/hy/material/2023/06/19/82876
https://hraparak.am/post/e3d6e4f09146de1ce9e48a26fe23130c

հայտարարություն է տարածել այն մասին, որ Գործարանի աշխատանքը կաթվածահար վիճակում է, ցանկացած տեխնիկայի շարժ թիրախավորված է, դրանով պայմանավորված՝ շատ սահմանափակ աշխատանքներ են իրականացվում[9]:

60. Գործարանի թիրախավորման և աշխատողների վիրավորում ստանալու կապակցությամբ հայտարարությամբ են հանդես եկել ՀՀ ԱԳՆ-ն[10], ԱՄՆ պետդեպարտամենտը[11], ինչպես նաև Գործարանի տնօրինությունը[12]: Երասխ են մեկնել ԵՄ դիտորդները[13], Հայաստանում հավատարմագրված միջազգային դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները[14]:

61. Բացի այդ, Գործարանի տնօրինությունը տարածել է հատուկ տեսանյութ, որում երևում են ադրբեջանական զինված ուժերի արձակած կրակոցների դրվագները[15]:

62. Փաստագրված բոլոր անհերքելի ապացույցների համադրության ու վերլուծության հաշվառմամբ՝ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է.

«Ադրբեջանի զինված ուժերի գործողությունները քաղաքացիական օբյեկտների ու քաղաքացիական անձանց ակնհայտ և ուղղակի թիրախավորում են, ինչը կոպտորեն խախտում է ժամանակակից աշխարհում ընդունված իրավական չափանիշներն ու սկզբունքները, բացահայտ արհամարհանք է մարդու իրավունքների և միջազգային իրավունքի նկատմամբ, հակասում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը»:

63. Մարդու իրավունքների պաշտպանն այցելել է նաև Արարատի բժշկական կենտրոն, որտեղ տեսակցել է ադրբեջանական կրակոցներից վիրավորում ստացած Հնդկաստանի երկու քաղաքացիներին: Հունիսի 14-ի առավոտյան վիրավորում ստանալուց հետո նրանք անմիջապես տեղափոխվել են նշված բժշկական կենտրոն:

---

[9] https://shorturl.at/pqlJZ
[10] https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2023/06/13/az_eraz/12049
[11] https://cutit.app/XkIGs
[12] https://cutit.app/ebsNt , https://shorturl.at/SZ123
[13] https://www.freenews.am/post/e707d2af8343f5b1b49c4c04f311b034
[14] http://surl.li/ixmmr
[15] https://www.youtube.com/watch?v=xOBXTKFBX7k

64.Բուժկենտրոնի տնօրենն ու բուժող բժիշկը տեղեկացրել են, որ Հնդկաստանի երկու քաղաքացիները բուժկենտրոն են ընդունվել կրծքավանդակի շրջանում բեկորային վիրավորումներով, վիրահատությամբ բեկորները հեռացվել են, նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

65.Պաշտպանը տեղեկացվել Գործարանի աշխատող հանդիսացող Հնդկաստանի երկու քաղաքացիների առողջական վիճակով, ծանոթացել բուժման ընթացքին ու այլ մանրամասների: Բուժկենտրոնի տնօրենն ու բուժող բժիշկը տեղեկացրել են, որ նրանց առողջական վիճակը գնահատվում է միջին ծանրության և վերջիններս մշտապես գտնվում են բժիշկների հսկողության ներքո, ցուցաբերվում է անհրաժեշտ բժշկական օգնություն:

66. Պաշտպանն արձանագրում է, որ բազմաթիվ են անհերքելի ապացույցներն առ այն, որ ադրբեջանական զինծառայողներն ուղղակիորեն թիրախավորել են քաղաքացիական անձանց ու ենթակառուցվածքներ, ինչը միջազգային իրավունքի նորմերի խախտում է:

V. ՕԲՅԵԿՏԻՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ/

Լուսանկար 1. Ադրբեջանական մարտական դիրքը՝ տեղակայված Երասխ բնակավայրի քաղաքացիական տան դիմացի բլրին, որտեղից նույնպես արձակվել են կրակոցներ:

Լուսանկար 2. Բլուրի վրա տեղակայված ադրբեջանական մարտական դիրքերից թիրախավորվում է ամբողջ Երասխ բնակավայրը:

Լուսանկար 3. Երասխ բնակավայրի դպրոցի ու մանկապարտեզի անմիջապես դիմաց տեղակայված ադրբեջանական մարտական դիրքը: 2023թ. հունիսի 14-ին դպրոցի քննական պրոցեսը խաթարվել է նաև այս դիրքից արձակված կրակոցների պատճառով:

Լուսանկար 4. 2023թ. հունիսի 14-ի առավոտյան ադրբեջանական կրակոցների պատճառով դպրոցում ընթացող քննության՝ նախատեսվածից շուտ է ավարտելու վերաբերյալ արձանագրություն:



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14.06.2023թ

2023թ հունիսի 14-ին Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում տեղի էր ունենում 12-րդ դասարանի պետական ավարտական քննություն: Հայոց պատմություն առարկայից, այդ թվում՝ նաև Աբարատի մարզի Երասխի միջնակարգ դպրոցում, որտեղ պետական ավարտական քննություն էին հանձնում թվով 4 շրջանավարտներ:

Մարզի համաձայն՝ քննության մեկնարկը տրվել էր ժամը 10[00]-ին, ներկա էին քննությանը մասնակցելու թույլտվություն ստացած բոլոր աշակերտները (թվով 4 աշակերտ):

Քննության օրը՝ 2023 թվականի հունիսի 14-ին, ժամը 11[25]-11[30] ընկած ժամանակահատվածում լսվեցին Երասխ գյուղի ուղղությամբ ինտենսիվ կրակոցներ. երբեմն նման տրամաչափի կրակոցներ և այդպիսի ձայն ունեցող պայթյուններ չէինք լսել:

Դեպքի մասին (կրակոցների և պայթյունների) տեղեկացրեցի Արարատի մարզպետարանի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության ղեկավար Մարտին Մանուկյանին: Վերջինիս կողմից ստացա հանձնարարական՝ քննությունն անմիջապես դադարեցնելու և տվյալ պահի դրությամբ արձանագրություն կազմելու վերաբերյալ, ինչպես նաև՝ քննությանը մասնակից աշակերտներին, անվտանգության կանոնները պահպանելով, տարհանելու մասին. երկրորդ փուլով՝ դպրոցի աշխատակիցներին տարհանելու մասին:

Նշեմ, որ ժամը 11[00] րոպե արդեն իսկ դպրոցում գտնվում էին միայն դպրոցի տնօրենը, ուսումնական գծով տնօրենի տեղակալը, Մասնագիտական կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալը, զինղեկը և տնօրենի՝ տնտեսական աշխատանքի գծով տեղակալը:

Սույն արձանագրությունը կազմվել է 2023 թ-ի հունիսի 14-ին Երասխի միջնակարգ դպրոցում՝ ներքոհիշյալ անձանց ներկայությամբ, որի համար ստորագրում ենք.

Մ. Չավուշյան (տնօրեն)

Ա. Եղյան (տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)

Լ. Մանուկյան (տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ)

4. Հ. Մանուկյան (Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչ)

5. Ա. Ավետիսյան (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալ)

Լուսանկար 5. Կրակոցների հետևանքով վնասված քաղաքացիական ավտոմեքենան:

Լուսանկար 6. Կրակոցներից վնասված Գործարանի վարչական շենքը

Լուսանկար 7.1. Կրակոցների հետևանքով վնասված շինարարական տեխնիկան

Լուսանկար 7.2.

Լուսանկար 8.1. Գործարանի նոր կառուցված պատերին, սյուներին ու պարսպին հասցված վնասները

Լուսանկար 8.2.

Լուսանկար 8.3.

Լուսանկար 9. Գործարանի ուղղությամբ արձակված փամփուշտների բեկորները



Լուսանկար 10. Արարատի բժշկական կենտրոնում վիրավորում ստացած անձանց տեսակցելու ժամանակ Մարդու իրավունքների պաշտպանին են ներկայացվել այն բեկորները, որոնք վիրահատությամբ դուրս են բերվել վիրավորների մարմիններից:

VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարևորելով Արարատի մարզի Արարատ համայնքի Երասխ բնակավայրում անձանց իրավունքների պաշտպանության առաջնահերթությունը և առկա խնդիրներին պատշաճ և արագ արձագանքելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը ներկայացնում է այդ խնդիրների հասցեագրմանն ու լուծմանն ուղղված առաջարկներ: Այսպես.

Փաստահավաք աշխատանքների և համապարփակ վերլուծությունների արդյունքներով, Պաշտպանը նախևառաջ արձանագրում է, որ ադրբեջանական զինված ուժերի ագրեսիվ վարքագծի հետևանքով մարդկանց համար առաջացել են անվտանգային լրջագույն խնդիրներ՝ թիրախավորվել են Երասխ բնակավայրի քաղաքացիական բնակչությունն ու քաղաքացիական ենթակառուցվածքները:

Ինչպես Հայաստանի մյուս սահմանամերձ բնակավայրերում, Երասխում ևս առաջնային է բնակիչների հոգեկան անձեռնմխելիության իրավունքի ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացումը և հանրության շրջանում առաջացած լարվածության մթնոլորտի վերացման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը: Ադրբեջանական կրակոցները խոչընդոտում են բնակիչների բավարար կենսամակարդակի և զբաղվածության իրավունքի իրացումը, ի թիվս այլնի, առաջացնելով գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու և ապրուստի միջոց հոգալու հետ կապված խնդիրներ:

Զբաղվածության ապահովման և բնակիչներին աշխատանքով ապահովելու տեսանկյունից կարևոր նշանակություն կարող է ունենալ Երասխում նոր կառուցվող Գործարանը:

Այս առումով, ադրբեջանական զինծառայողների գործողությունների արդյունքում խախտվում է նաև գործարարությամբ զբաղվող անձանց տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը՝ անհնար դարձնելով Գործարանի շինարարական աշխատանքների բնականոն ընթացքի ապահովումը:

Ուստի, անհրաժեշտ է շահագրգիռ քննարկումների արդյունքում գտնել նշված խնդրի լուծմանն ուղղված համակարգային մոտեցումներ՝ ակտիվորեն գործադրելով ինչպես մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող ներպետական ու միջազգային կառույցների, այնպես էլ դիվանագիտական խողովակների հնարավորությունները:

Միաժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկում է՝

✓ բնակիչների համար ապահովել իրենց իրավունքների և անվտանգային հարցերի վերաբերյալ կանոնավոր, հստակ և մատչելի հանրային հաղորդակցություն: Կարևոր է մարդկանց հետ պարբերաբար հանդիպումների շրջանակներում թիրախային տեղեկատվության տրամադրումը, որպեսզի բնակիչներն անվտանգային մարտահրավերների հետ մեկտեղ չհայտնվեն նաև տեղեկատվական վակուումում և անորոշության մեջ,

✓ մեծացնել քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման հաճախականությունը, այդ թվում՝ մանկապարտեզում և դպրոցում,

✓ նկատի ունենալով, որ դպրոցն ու մանկապարտեզն ուղիղ նշանառության ներքո են՝ լրացուցիչ միջոցներ ձեռնարկել անվտանգության երաշխավորման համար՝ ներդնելով ստեղծված իրավիճակին համապատասխանող անվտանգային մեխանիզմներ՝ իրականացնելով իրազեկման հանրային արշավներ և վարժանքներ,

✓ վերանայել ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակներում (ճգնաժամային իրավիճակներում) գործողությունների պլանները՝ դրանք դարձնելով առկա իրավիճակին համադրելի ու առավել գործուն,

✓ շարունակել ադրբեջանական զինծառայողների գործողությունների, ինչպես նաև խաղաղ բնակիչների անվտանգությանը սպառնացող ագրեսիվ վարքագծի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և ամփոփման հետևողական աշխատանքները՝ դրանք Մարդու իրավունքների եվրոպական դատարանին, մարդու իրավունքների

պաշտպանության մանդատ ունեցող այլ միջազգային դերակատարներին ներկայացնելու նպատակով:

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը առանցքային է համարում միջազգային կառույցների, մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կազմակերպությունների ու դերակատարների պատշաճ արձագանքն ու հասցեական իրավական գնահատականը Երասխ բնակավայրի բնակիչների, տեղում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ու աշխատողների իրավունքների խախտումների վերաբերյալ, ինչպես նաև ակտիվ ջանքերի գործադրումը այդ խախտումները վերացնելու ուղղությամբ: